ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2018 թվականի N 109-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի N 14-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2018-2023 թվականների հնգամյա զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2018-2023 թվականների հնգամյա զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամ՝ Ռուզաննա Սարգսյանին:

4. Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Սարգսյանին՝

1) համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Գետամեջ համայնքի 2018-2023 թվականների զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

2) համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակել համայնքի 2018-2023 թվականների զարգացման ծրագրի նախագիծը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 4
գ.Գետամեջ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետամեջ համայնքի ղեկավարի 2018 թվականի
սեպտեմբերի 4-ի N 109-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2018 թվականի սեպտեմբերի 20-ին ժամը՝ 14:00-ից մինչև 15:20-ն «Գետամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կկայանան հանրային բաց լսումներ՝ Գետամեջ համայնքի 2018-2023 թվականների հնգամյա զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք Գետամեջի համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.getamej.am) հրապարակված Գետամեջ համայնքի 2018-2023 թվականների հնգամյա զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու առարկությունները, որոնք կարող են ուղարկել getamej.kotayq@mta.gov.am կամ getamejmc@mail.ru էլեկտրոնային հասցեներով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել աշխատակազմին:

Աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան առաջարկությունները և առարկությունները ստանալու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2018 թվականի N 110-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1-ին հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման N 1 հավելվածով և հիմք ընդունելով Միեր Ադամյանի ներկայացրած հայտը՝ ***որոշում եմ.***

1. Միեր Ադամյանին պահեստ կառուցելու նախագծային փաստաթղթերի մշակման համար տալ նախագծման թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 7
գ.Գետամեջ